Սասնա ծռեր 2

Հեռախոսահամար 011 70 00 67

ՀՀ ԱԺ լրատվության եւ հանրության հետ կապերի վարչություն

Հրայր Զորյանին

«Armdaily.am» լրատվական կայքի լրագրող

Արփինե Պետրոսյանից

Հարգելի պրն Զորյան,

Համաձայն 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 42-րդ եւ 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. Քանի՞ հոգուց էր բաղկացած Գերմանիա մեկնած ԱԺ նախագահի պատվիրակությունը, խնդրում եմ նշել նաեւ ուղեկցող անձանց՝ օգնական, թիկնապահ, խոսնակ եւ այլն։

2. Ո՞վ է հոգացել այցի ծախսերը, եթե այն հոգացելկ է գերմանական կողմը, ապա քանի հոգունը եւ որ ծառայությունները։

3. Ինչքա՞ն են արժեցել ավիատոմսերը, հյուրանոցը եւ ինչքա՞ն օրապահիկ են ստացել պատվիրակության անդամները, խնդրում եմ մանրամասնել անունները, յուրաքանչյուր անդամի վրա ծախսված գումարը։

4. Ինչո՞ւ է պաշտոնական այցը տեւել մոտ մեկ շաբաթ, սովորաբար արտասահմանյան այցերը տեւում են մի քանի օր:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Խնդրում եմ ծանուցումը ուղարկել էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

(Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար):

Կանխավ շնորհակալ եմ՝

Արփինե Պետրոսյան

26.03.2019